որ դրա համար կօնդակ ստացած ունեն Լ.ջմիածնից։ Շրջողների մէջ անուանում են Շուշու գործակալ քահանայ տէր Մէլքիսեդէկն։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Մինաս Զերազից նրա հեղինակութեան «Դրիչ և Սուր» գրքոյկի առաջին հատորը։ Տպված է Կ. Պոլսում, Արամեան տպագրութիւն, Ներկայ 1881 թիւն։ Այս գրքի մասին, նրան կարդալուց յետոյ, կաշխատենք յայտնել մեր կարծիքը։

—

Ստացանք բազմաթիւ նամակներ ԹԻՖԼԻՍԻ քաղաքային փոստով, որոնց մէջ «Մշակի» ընթերցողներից և առհասարակ Թիֆլիսի հայ երիտասարդներից շատերը մեզ շնորհակալութիւն են յայտնում «Դարձեալ մի ապացոյց» առաջնորդող յօդուածի համար, որ տպվեցաւ «Մշակի» № 214 մէջ։

—

Ստացանք մի հատ պ. Քիւրքճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուի աշտարակեցի պ. Բարդուղիմէոս Սուքիասեանի վրա և ստացանք նրանից 20 ռուբլի։

—

Կ. Պոլսից մեզ գրում են որ Լօնդոնում հիմնվում է մի նոր ֆրանսերէն—անգլիերէն լրագիր «Gazette Orientale» անունով պ. Fermain-ի խմբագրութեամբ, որ յանձն է առել ջերմ կերպով պաշտպանել հայոց հարցը։ Մեր թղթակիցը հաղորդում է մեզ և հետևեալը։ «Ճիշդ ազրիւրից իմացանք, որ Սայիդ-փաշան «Մշակի» ամեն համարները թարգմանել է տալիս իր մի հայ քարտուղարի ձեռքով։» Այդ բանը մեզ հարկաւոր էր իմանալ, որովհետև մենք նորին գերազանցութեանը շատ բան ունենք հասկացնելու։

—

Մեր թղթակիցը Կ. Պոլսից գրում է մեզ և հետևեալը։ «Հայաստանի համար նշանակելի նոր հայ պաշտօնեաների ցուցակը արդէն կազմված պատրաստ է և կը հրատարակվի այս օրերս, բայց, ասում են, այստեղի հայ հասարակութիւնը շատ վստահութիւն չունի այս ընտրութիւնների վրա։»

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են։ «Այս օրերս Կովկասեան ուսումնարանական վիճակի հոգաբարձու պ. Լանովսկի այցելեց մեր Բաթումի երկսեռ հայոց դպրոցը և շատ գոհ մնաց աշակերտների պատասխաններից և առհասարակ դպրոցից։ Նորին գերազանցութիւնը դպրոցից դուրս գալուց առաջ արտասանեց հրապարակապէս հետևեալ խօսքերը։ Հայերը, ասաց նա, միակ ազգ են կովկասում, որ ամեն մի այսպիսի փոքրիկ քաղաքում, չը նայելով նիւթական պակասութեան, շատ լաւ հետևում են իրանց զաւակների ուսում տալուն։»

—

ԹԻՖԼԻՍԻ Հաւլաբար անունով թաղի ժողովրդի մէջ վերջին երկու, երեք տարիներում զգալի է շարժողութիւն դէպի լաւը։ Ընթերցասիրութիւնը հետզհետէ տարածվում է։ Երեք տարի առաջ այստեղ չորս թէ հինգ հոգի կար լրագիր կարդացող, այն ինչ այժմ «Մշակի» թէ հատով առնողների և թէ ստացողների թիւը հասնում է 22-ի և «Մեղուինը» 6-ի։

—

Մեզ գրում են Կարինից։ «Այստեղ պ. Լանասարեանի հաշուով բացվելի բարձրագոյն դպրոցի հիմնվելուն շատ սպասելուց յոգնեցանք։ Զմեռն էլ մտեցաւ, բայց ոչինչ խօսք դեռ չը կայ դպրոցի բացվելու մասին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 6 Նոյեմբերի

Յաւալի է և մի և նոյն ժամանակ մեր գործին շատ վնասաբեր, որ հայկական հարցին վերաբերեալ շատ կարևոր և էական կէտերը մինչև հիմայ ևս մնացած են մութ և չը պարզված հասարակութեան համար։ այսպիսի հիմնական կէտերից գլխաւորը Հայաստանի ինքնավարութեան խնդրի էութեան չը պարզվելն է ամեն իր հարկաւոր կողմերից։ Հայոց հարցը ծագելու օրից ի վեր գուցէ հազար հատ յօդուած գրված լինեն հայոց հարցին վերաբերվող թէ հայ և թէ օտար լրագիրների մէջ, և նոցա բոլորի էութիւնը կայացած է եղել նորանում թէ՝ առանց առանձին քաղաքական արտօնութիւնների Թիւրքաց-Հայաստանի համար, ինքնավարութեան կամ այլ քաղաքական մենաշնորհութեանց ձևով, չէ կարելի յուսալ որ և է հասարակային կամ անհատական բարեբաղդում Թիւրքահայոց վիճակի մէջ, որ և է անձնական և ընչից ապահովութիւն, որ և է պատուի և իրաւանց երաշխաւորութիւն և այլն։ Այնպէս որ, որ և իցէ տնտեսական կամ այլ գործառնութեանց յատակագծի առաջարկվիլը և գործադրվիլը, որ և իցէ ազգօգուտ ձեռնարկների հրապարակ հանվիլը և յաջողվիլը մինչև հիմա ևս շատերը պայմանաւորված են համարում միայն և եթէ այդ ինքնավարութեան, այդ առանձին քաղաքական մենաշնորհութիւնների ներմուծութեամբ։ «Ի՞նչպէս կարելի է մի բան անել Հայաստանի մէջ, երբ այնչափ զեղծումներ կան Թիւրքաց դատաստանական մասի մէջ, ինչպէս կարելի է մըտածել որ և իցէ արդիւնաւոր գործի ձեռնարկութեան վրա, երբ քիւրդերը և չէրքէզները չեն թողնում մարդուն աչք բաց անել, երբ Թիւրք և քիւրդ բէյերը յափշտակում են, թալանում և ամեն տեսակ հարստահարութիւններ անում» և այլն և այլն։ Այս տեսակ բաներ այնչափ թափած ենք և դեռ շարունակում ենք թափել մենք ինքներս ստար լրագիրների էջերը։ Նոքա այնչափ յայտնի են իւրաքանչիւր հային, որ վերոյիշեալ բողոքների պէս բողոքներ էլ աւելորդ են։

Բայց ամեն գործի մէջ միակողմանի լինելը դատապարտելի է, մանաւանդ ևս այնպիսի հարցի մէջ, որը կարօտ է բազմակողմանի և ամենանախնդ ուսումնասիրութեան։ «Ինքնավարութիւն» և «քաղաքական իրաւունքներ» ազդարարելու հետ միասին, հարկաւոր է անշուշտ, որ մենք քննենք ևս այն միջոցները, որոնցով կարելի է ստանալ այդ ինքնավարութիւնը և քաղաքական իրաւունքները ուրիշ կերպ, քան թէ ազատանքներով դիմելով Թիւրքիային, Անգլիային կամ մի այլ պետութեան։ Կան պայմաններ և կէտեր, որոնք մինչև հիմայ բոլորովին զանցառութեան և մոռացութեան մէջ են մնացել այն բոլոր ինքնակոչ «քաղաքագէտ» խմբագիրների կողմից, որոնք շաբաթը երեքչորս առաջնորդող յօդուածներով հայոց հարցի վրա պոռոտախօսելուց յետո, իրանց պարտաւորութիւնը կատարած են համարում և Հայաստանի ապագայի գործը «երաշխաւորված...» հիմայ բացատրենք մեր ասածները։

Յայտնի է, որ Բարձր Հայաստանը և փոքր Հայաստանը ենթարկված են մի և նոյն թիւրքական օրէնքներին։ Յայտնի է, որ չէրքէզները, Թիւրքմենները և ավշարները փոքր Հայաստանի մէջ աւելի ևս կատաղի են և բազմաթիւ, քան թէ հայասերունդ քիւրդերը Վանի, Մուշի, Դիարբէքիրի և Էրզրումի վիլայէթներում։ Յայտնի է ևս որ փոքր Հայաստանի հայերի բնակութիւնը և թիւը ուրիշ բարբարոս ազգաբնակութեան հետ համեմատելով ոչ աւելի զօրեղ է, քան թէ Բարձր Հայաստանի հայերինը։ Բայց ինչից է առաջ գալիս այսպիսի մի մեծ և անհամեմատ տարբերութիւն այդ երկու կողմի հայ ազգաբնակութեան վիճակի մէջ։ ահա այս հարցն է, որի պարզելը նոյնչափ հարկաւոր է մեր ազնիւ գործերի կարևորութիւնը գնահատելու համար, որչափ և Հայաստանին տալիք ինքնավարութեան պատրաստութիւնը հասկանալու համար։

Բայց ինչի մէջ է կայանում Բարձր ու փոքր Հայաստանի հայերի դրութեանց մէջ եղած զանազանութիւնը, պիտի հարցնէք։ Մեծ կամ Բարձր Հայաստանի հայերի բոլոր ցաւը նորա մէջ է կայանում, որ այդ երկրի մէջ գրեթէ ոչ մի հայ հասկացողութիւն չունի թէ ինչ ասել է անհատական և հասարակային իրաւունք, թէ ինչ օրէնքներ է դրած Թիւրքիան այդ իրաւունքների պաշտպանութեան համար և թէ ինչպէս կարելի է օգուտ քաղել այդ իրաւունքներից։ Ահա այն ամենատարրական տեղեկութեանց թերութիւնը, որից օգուտ քաղելով մի կողմից հայ վաշխառուները, միւս կողմից բէյերը և նոյն իսկ Թիւրք դատաւորները և կառավարիչները, Մեծ Հայաստանի ազգաբնակութիւնը կթափեն ևս այն կերպ, ինչպէս մենք լսում ենք և տեսնում ամեն օր։ Գնացէք Կ. Պոլսի պատրիարքարան և քրքրեցէք ամեն օր եկող բազմաթիւ դանգատները, խստութեանց և հարստահարութեանց բողոքները, յուսահատութեանց և դառնութեանց ճիչերը, կը տեսնէք, որ այդ ամենը գալիս են միայն և եթէ Մեծ Հայաստանից։ Ինչու—որովհետև փոքր Հայաստանի հայերը համեմատաբար այնչափ արթնացած են և աչքաբաց, որ գիտեն նոյնչափ օրէնսդրական կանոններով իրանց իրաւունքները փաստաբանների ձեռքով ատեանի առաջ պաշտպանել, որչափ Զմիւռնիա, Կ. Պոլիս, Կեսարիա կամ այլ մեծամեծ քաղաքների մէջ։ Էլ չեմ խօսում զէնքով աւազակների դէմ իրանց իրաւունքները պաշտպանելու վրա....

Ձեզ երևի յայտնի է, որ տասն ու հինգ տարիէ ի վեր Թիւրքիայի մէջ մտցրած է իր բոլոր բովանդակութեամբ ֆրանսիական օրինաց կոդեքսը, որի համեմատ Զմիւռնիայի կամ Կ. Պոլսի մէջ արդարադատութեան պահանջները կարելի է լինում լցուցանել։ Բայց ում մեղքն է, որ Մեծ Հայաստանի մէջ բաւական հասկացողութիւն չունենալով այդ օրինագրքերի և օրէնքների վրա, թոյլ են տալիս դատաւորներին օգուտ քաղել այդ տգիտութիւնից և վարվել նոցա հետ կամայական կերպով։

Ուրեմն էլ առանց ժամանակ կորցնելու անմիջապէս դիմենք այն անելիքներին, որոնք վերաբերվումեն, մեր հայ ազգի անդամներին։ Իսկ մեր անելիքները հետևեալում են կայանում. տարածել Մեծ Հայաստանի Վանի, Մուշի, Էրզրումի, Իրզինգեանի և Դիարբէքիրի վիլայէթներում իրանց տէրութեան նոր օրինագրքերը հայոց տառերի և լեզուի փոխած. ուղարկել այդ տեղ շարժուն փաստաբաններ, որոնք, տեղից տեղ պըտտելով, ժողովրդին մի կողմից օրէնք սովորացնեն, միւս կողմից ձրիաբար նոցա դատը պաշտպանեն հայ և Թիւրք հարստահարիչ վաշխառուների դէմ, և այսպիսով միաք ներշնչեն մեծ հայաստանցոց թէ նոքա էլ մարդ են և իրանց քաղաքական և հասարակային իրաւունքների վրա մտածելու հրամանը ունեն իրանց տէրութիւնից։ Շատացնել այդ կողմերը գիւղական ուսումնարաններ, որովհետև տգիտութիւնից տանջվողները քաղաքացի վաշխառուները չեն, այլ գիւղական ազգաբնակութիւնը։ Հիմնել այդ հարստահարված գիւղացիների համար ակցիոներական փոքրիկ դրամատուներ։ Ցետ ուղարկել Մեծ Հայաստանից դուրս ապրող մատ հարիւր հազար բնակիչ ժողովուրդը և նոցա հետ դընել նոյնպէս մի քանի շարժուն փաստաբաններ, նոցա քաշած հողային և տոկոսատուժական գրկանքները նայելու համար։ Մասնագէտ մարդիկ ուղարկել վերջապէս հայ ժողովրդի տնտեսական և հասարակային վիճակը մասնագիտաբար ուսումնասիրելու և մեր դարմանելի միջոցները ցոյց տալու համար, որպէս զի Հայաստանի հայ ազգաբնակութիւնը իր տնտեսական դրութեամբ մի օր աւելի դժան և վատթար գերութեան մէջ չընկնէ Եւրոպայից եկող էկսպլուատատորների ձեռքին և այլն և այլն։

Ահա այսպիսի հարցեր են, որոնցով պիտի պարապվենք մենք, ստանալի ինքնավարութեան պատրաստական աշխատանքներ կատարելու համար։

Ի նկատի ունենալով այս ամենը Ներսէս պատրիարքը Մանզուէլի Էֆենդի խմբագիր պ. Փանոսեանի աջակցութեամբ արդէն պատրաստել է տալիս Թիւրքաց նոր կոդեքսի հայերէն փոխադրութիւնը, որով կարելի լինի մի քանի հազար հատ տպագրելով, տարածել նոցա հայ ազգաբնակութեան մէջ։ Պ. Կարապետ Փանոսեանի հէնց այս գործն էր, որի վրա խօսացել էի ձեզ անցեալ անգամները տեղեկութիւն տալ, երբ Ներկայացրի ձեր ընթերցողներին այդ անխոնջ վաստակաւորի քան տարուայ գործունէութեան համառօտ նկարագիրը։ Այսպիսի մի մեծ գործ, ինչպէս մատ երեք հազար էջ կոդեքս հայերէնի փոխելը, որչափ էլ հակայական լինի, բայց Փանոսեանի ուժը նորան էլ կը յաղթէ. այստեղ խոչնդոտը միայն դրամն է, որով կարելի լինի այդ գրքերը տպել տալ։ Իսկ այս մասին Ներսէս պատրիարքին ոչինչ ուրիշ միջոց չը մնաց, բացի դիմել ռուսահայերի օգնութեան, վասն որոյ երբ հարցրեց ինձ այն օրը թէ ինչ մարդիկներին դիմէ մատ տաս հազար ռուբլ օգնութեան համար, ես մատնեցի նորան երկու ունևոր մարդկանց հայրենասիրութիւնը, որոնց և դիմեց մեր ազգի պաշտելի խնամակալը։ երբ նորա պատուէրները կը կատարվեն, պարտաւորութիւն կը համարեմ առանձին ցուցակով ուղարկել ձեզ այն յարգելի ազգայինների անունները, որոնք կը մասնակցեն վերոյիշեալ գումարի հայթայթման։

Բայց դարձնելով իւրաքանչիւր հայի ուշադրութիւնը այս ներքին աշխատանքների պրոգրամի վրա, դորանով բնաւ երբէք չենք ուզում ասել թէ մենք հէնց մի բոպէ պիտի դադարենք Անգլիայի և Եւրոպայի ետխան ձգձգել հայոց հարցի մասին, քանի լիցի, մենք բնաւ չենք ուզում այդ ասել, այլ ուզում ենք յայտնել այն միայն թէ՝ մի կողմից դիմելով Եւրոպային, պաշտպանելով հայոց դատը Եւրոպական թերթերի մէջ, սերտ յարաբերութիւններ ունենալով Եւրոպական դիպլոմատների և թղթակիցների հետ, մարդ, պատգամաւոր և ուղերձ ուղարկելով Եւրոպական կաբինետներին, խօսքով ամեն կերպ ձայն և ազմուկ գցելով հայոց հարցի մասին, մենք չը դադարենք նոյն էնէրգիայով աշխատել ևս ներքին պատրաստութեան համար, որով ինքնավարութեան համար նշանակված չորս-հինգ վիլայէթները մի յատուկ Եւրոպական յանձնաժողով գալու ժամանակ, հարկաւոր բեֆորմները մտցնելու համար, պատրաստ գտնէ ինքնավարութիւնն ընդունելու։

Ահա այս պիտի լինի մեր հոգացողութիւնը։

Վասն որոյ ուրիշ անգամ ևս կը խօսեմ Հայաստանի ինքնավարութեան համար տեսնելի ներքին պատրաստութիւնների նշանակութեան վրա, որոնցով պայմանաւորված է Հայաստանի քաղաքական և հասարակային իրական վերածնութիւնը։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին Վաշինգտոնից հեռագրում են, Նոյեմբերի 8-ին հետևեալը։ Դատաստանական քննութեան ժամանակ Գիտոն չը փոխեց իր վարմունքը. նա առաջվայ պէս անչափաւոր էր։ Նիստի ժամանակ սաստիկ տպաւորութիւն գործեց Գարֆիլդի ողնաշարի հետազօտութեան պատմելը։ Գիտոյին բանտը վերադարձնելու ժամանակ, հրացան արձակեց նրա վրա ձիու վրա նստած մէկ երիտասարդ մարդ, և թեթև կերպով վիրաւորեց նրա ձեռքի յօդը։ Այդ մարդը կալանաւորված է։ Կարծում են, որ այդ մարդը խելագարված է։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Միացեալ-Նահանգներում, Պրովիդանսում, մեծ հասարակութիւն է գրաւում մէկ հրէշ մարդ-արջ։ Այդ հրէշը մարդկային ցեղից է։ Նրա անունը Դաւիթ Միֆալ է։ Նրա հայրը ֆրանսիացի և մայրը-իրլանդուհի է։ Դեռ ևս մանուկ ժամանակ նա այնքան տգեղ էր, որ նրան օտարներից ծածկում էին։ Երբ որ նա սկսեց մեծանալ, այն ժամանակ ծնողները, նրանից ազատվելու համար տարան նրան մէկ վայրենի անտառ և թողեցին ճակատագրի կամքին։ Անտառային բնակիչ դառնալով, նա ինտինկտի զօրութեամբ ընդունեց գազանների բոլոր սովորութիւնները։ Նա այժմ գազան է և ոչ թէ մարդ. անդադար արջի նման մռնչում է, դէմքը ոչինչ խելք չէ արտայայտում, թէպէտ բնի վերին մասը նոյնպիսի է, ինչպէս ամեն մարդ ունի, բայց ձեռքերը և ոտները ուղիղ արջի են և ման է գալիս չորս ոտների վրա։ Ամերիկական լրագիրները հաստատում են, որ այդ հրէշը այնու ամենայնիւ չէ մոռացել մարդկային հակումները և մնացել է նրա մէջ սէրը դէպի երաժշտութիւն, փողը և քաղցրեղէնները։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 Նոյեմբերի։ Արկածուղու վերաբերեալ յանձնաժողովը Բարանովի նախագահութեամբ մէկ առանձին խորհուրդ կազմեց, ճանապարհների պարապքերը վճարելու միջոցների հարցը քննելու, եթէ անանկութիւն պատահի։ „Новости“ լրագիրը հաղորդում է, որ Ֆինանսների մինիստրութիւնը քննում է Ռուսաստանից նաւթ դուրս տանելու արգելման նախագիծը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ